ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂՈՒԿԱՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՄԱՐՏԻԿԻ

ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈԲԲԻՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2023

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГУКАСЯН ГЕВОРК МАРТИКОВИЧ

АРМЯНСКОЕ ЛОББИ ЕВРОПЫ КАК АКТОР РАЗВИТИЯ ОТНОШЕНИЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА

Диссертация на соискание научной степени кандидата политологических наук по специальности ИГ.00.02 “Политические институты и процессы”

АВТОРЕФЕРАТ

Ереван-2023

Ատենախոսության թեման հաստատվել է **Հայաստանի Հանրապետության Պետական կառավարման ակադեմիայում**

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մարիամ Մամիկոնի Մարգարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Փայլակի Ենգոյան**
քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ **Արմեն Ռուբիկի Հարությունյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Երևանի պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023թ. հունիսի 29-ին, ժամը 13:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում: Սեղմագիրն առաքված է 15.05.2023թ.:

ՀՀ ԲՈԿ-ի 056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Վ. Ս. Պետրոսյան

Тема диссертации утверждена в **Академии государственного управления РА**

Научный руководитель: доктор политических наук, профессор **Мариам Маргарян Мамиконовна**

Официальные оппоненты: доктор политических наук, профессор **Енгоян Ашот Пайлакович**
кандидат политических наук, доцент **Армен Арутюнян Рубикович**

Ведущая организация: **Ереванский государственный университет**

Защита состоится 29 июня 2023г. в 13:00 часов на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 “Политология и международные отношения” ВАК РА. Адрес: РА, Ереван 0025, ул. А. Манукяна 1.
С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ.

Автореферат разослан 15 Мая.

Научный секретарь специализированного совета, кандидат исторических наук, доцент В. С. Петросян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հայաստանի անկախացումից հետո, հայրենիք-սփյուռք հարաբերությունների շարունակական կերպափոխմամբ պայմանավորված, անհրաժեշտություն է առաջացել արդի գլոբալ անորոշությունների և տուրբուլենտության (խառնաշփոթության) պայմաններում վերարժևորելու էթնիկ լոբբինգի գործունեության արժեքաբանությունը՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության հարաբերությունների զարգացման հնարավոր դերակատարության օրինակով: Այդ համատեքստում շեշտադրելով արդի ցանցային կառավարման առանձնահատկությունները, միգրացիոն անկառավարելի հոսքերի և տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների սրընթաց աճը՝ արդիական է ուսումնասիրել սփյուռքի և հատկապես հայկական սփյուռքի քաղաքական դերակատարումը: Պայմանավորված գլոբալ, գլոկալ և լոկալ (ազգային) համագործակցության մշակույթի զարգացմամբ՝ նպատակահարմար է արժևորել սփյուռքի տեղն ու դերը գլոբալ կառավարման համակարգում՝ որպես անդրազգային քաղաքական դերակատարի: Որպես այդպիսին՝ սփյուռքը, բազմաչափ հարաբերությունների մեջ մտնելով իր պատմական հայրենիքի և պետության, ինչպես նաև ընդունող պետության հետ, ինքնադրսևորվում և ինքնիրացվում է՝ ստանձնելով **համայնքային, էթնոպաշտպան և քաղաքական համագործակցության պատասխանատվություն:** Սփյուռքի կողմից էթնիկ լոբբիստական կազմակերպությունների ստեղծումն էլ իր հերթին նպատակ է հետապնդում մասնակցելու հայրենի պետության/ժողովրդի կյանքի կառավարմանը և միաժամանակ համագործակցելու ընդունող պետության հետ՝ որպես այդ պետության քաղաքացիական մշակույթի կրող: Հետևապես, նպատակահարմար է համակարգված բացահայտել սփյուռքի, մասնավորապես դրա քաղաքական գործունեության հիմնական գործառնողի՝ էթնիկ լոբբինգի ինստիտուտի անդրազգային բազմաշերտ դերակատարումը արդի միջազգային հարաբերություններում:

Նկատի ունենալով արդի ցանցային ռիսկերի կառավարումը՝ էթնիկ լոբբինգն իր ռազմավարությունը կառուցում է հանրային, մասնավոր և խմբային շահերի միջև փոխհարաբերությունների համադրման վրա՝ հնարավորություն տալով նրանցից յուրաքանչյուրին դերակատարում ստանձնելու համագործակցային անվտանգության (cooperative policy) ապահովման գործընթացում: Այսպիսով սփյուռքը նաև հանդես է գալիս որպես իր էթնիկ պատկանելիության էութենականացման այլընտրանք՝ հնարավորություն տալով ապատարածականացնելու ինքնությունը (de-territorialization of identity)[1]:

Ամփոփելով ասվածը՝ կարող ենք նշել հետազոտության արդիականությունը պայմանավորող հետևյալ հանգամանքները.

- էթնիկ լոբբինգի հնարավորությունների համակարգային վերլուծություն՝ ՀՀ-ԵՄ հարաբերությունների հետագա զարգացման նպատակով, հրաժարում կառավարման «փորձի սխալի» հարացույցից,

[1] **Brubaker R.**, The "diaspora" diaspora, Ethnic and Racial Studies, vol. 28 No. 1, January, 2005, p. 12.

- Հայաստանի Հանրապետության բնականոն արդիականացման գործընթացում ՀՀ-ԵՄ փոխհարաբերությունների ռացիոնալ կանխատեսում՝ կառավարման «գիտավերլուծական» հարացույցի սկզբունքների շրջանակում,
- սփյուռքի քաղաքական գործունեության ռացիոնալացման գնահատում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության շուրջ ծավալված անվտանգության գոյաբանական ռիսկերի պայմաններում՝ միջէթնիկ հակամարտություններում սփյուռքի ներառված լինելու համակարգային ուսումնասիրման համատեքստում,
- լոբբինգի ներկայացումը՝ որպես քաղաքական գործընթացի ինստիտուցիոնալ դրսևորման ձև՝ շեշտադրելով շահային խմբերի մոտիվացիան,
- սփյուռքյան էլիտաների ինքնության երկվության գնահատումը և արժեշահային համակարգերի զուգամիտման հրամայականները,
- էթնիկ լոբբինգի ինստիտուտը որպես «փափուկ ուժ» դիտարկելու անհրաժեշտությունը և կիրառելիության հնարավորությունները,
- ՀՀ-ԵՄ ինստիտուցիոնալ փոխհարաբերությունների զարգացման տրամաբանությունը՝ ղարաբաղյան հիմնախնդրի և Արցախի Հանրապետության անվտանգության ապահովման հրամայականների շրջանակում,
- մուլտիկուլտուրալիզմի դիտարկում՝ որպես էթնիկ լոբբինգի արդյունավետ գործառնման երաշխավորման արժեհամակարգ,
- Եվրոպայում հայկական լոբբինգի խնդիրների վերլուծություն և կանխատեսում՝ քաղաքական առաջնահերթությունների և գործիքակազմի վերարժևորման համատեքստում:

Թեման նաև արդիական է ՀՀ-ԵՄ փոխհարաբերությունների արդյունավետ զարգացման, Հայաստանի Հանրապետության անվտանգային միջավայրի ռացիոնալացման, ինչպես նաև հայկական էթնիկ լոբբինգի գործունեության վերարժևորման ու հետագա զարգացման նպատակներով: Էթնիկ լոբբինգի ուսումնասիրումը հնարավորություն կտա ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման գործընթացում մշակելու ռազմավարական քաղաքականություն՝ կառավարման «գիտավերլուծական» հարացույցի սկզբունքերի կիրառելիության շրջանակներում: Ընդհանուր առմամբ կարող ենք փաստել, որ էթնիկ լոբբինգը, հանդիսանալով միջազգային քաղաքական գործընթացների դերակատար, մշտապես արդիական ուսումնասիրման թեմա է:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Թեկնածուական ատենախոսության թեմայի շրջանակներում ներառված հիմնախնդիրները տարբեր դիտանկյուններից ուսումնասիրվել են քաղաքագետների՝ մասնավորապես միջազգային հարաբերությունների տեսաբանների և քաղաքական գործընթացի ու ինստիտուտների հետազոտողների, սոցիոլոգների և պատմաբանների կողմից: Պետք է նշել, որ արդի ակադեմիական գրականության մեջ էթնիկ լոբբինգի ինստիտուտի հետազոտությունն էապես ստվերվել է, քանի որ դրան նվիրված ուսումնասիրությունները գլխավորապես կատարվել են սփյուռքին վերաբերող հիմնախնդիրների շրջանակում: Դրա արդյունքում էթնիկ լոբբինգի ինստիտուտը պատշաճ կերպով չի դիտարկվել որպես քաղաքական գործընթացի ինստիտուցիոնալ դրսևորում: Այնուամենայնիվ, առկա է սփյուռքի

վերաբերյալ հետազոտությունների պատկառելի ծավալ, որն օգտակար է եղել սույն ատենախոսությունը գրելիս: Մյուս կողմից, չնայած արտերկրում լոբբինգի վերաբերյալ արժեքավոր գիտական աշխատանքների մեծ ծավալին՝ դրանք մեծ մասամբ վերաբերում են լոբբինգի այլ ենթատեսակների և հիմնականում համակարգված մոտեցում չեն ցուցաբերում էթնիկ լոբբինգին:

Ատենախոսության բուն թեմայի գիտական մշակումը հիմնականում սկսվել է 20-րդ դարի 60-ական թվականներից, երբ լոբբինգի վերաբերյալ գիտական առաջնային ուսումնասիրություններ կատարեցին Կ. Բեյմեն, Լ. Միլբրաֆը, ավելի ուշ՝ Վ. Շենդելենը, Պ. Կոպլը և ուրիշներ: Ըստ Կ. Բեյմեի՝ լոբբինգ նշանակում է «քաղաքական և բյուրոկրատական հարթակներում սոցիալական խմբերի, պալատական շրջանակների և ընկերությունների բուռն գործունեություն»[2]: Լ. Միլբրաֆի սահմանումը հետևյալն է. «…Հաղորդակցությունը ընկալման վրա ազդելու կամ այն փոխելու միակ միջոցն է: Լոբբինգը, հետևաբար, ամբողջությամբ հաղորդակցական գործընթաց է»[3]: Ըստ Վ. Շենդելենի՝ «Լոբբինգը նվազագույնը հանրային իշխանությունների հետ տեղեկատվության ոչ պաշտոնական փոխանակումն է մի կողմից, մյուս կողմից՝ առավելագույնը պետական իշխանությունների վրա ազդելու ոչ պաշտոնական փորձ»[4]: Ավելի ուշ Պ. Կոպլն առաջարկեց նախորդների համեմատ առավել համընդգրկուն սահմանում. «Լոբբինգը շահագրգիռ ներկայացուցիչների միջոցով պետական մարմինների օրենսդրական-վարչական որոշումների փորձն է կամ հաջող ազդեցությունը: Ազդեցությունը նախատեսում ու ենթադրում է կապի նպատակային օգտագործում օրենսդիր կամ գործադիր մարմինների հետ հարաբերություններում»[5]:

Սփյուռքի բնորոշման ու դասակարգման, քաղաքական գործունեության վերհանման, Եվրոպայում հայկական սփյուռքի բնութագրման առումով արժեքավոր նշանակություն են ունեցել Գ. Շեֆերի[6], Ռ. Բրուբեքերի[7], Վ. Սաֆրանի[8], Ռ. Կոհենի[9], հայ գիտնականներից՝ Խ. Թոլոյանի[10], Տ. Թորոսյանի և Մ. Սարադյանի[11], Հ. Նահապետյանի[12], Հ. Հակոբյանի[13] և այլոց աշխատությունները:

Հայրենիք-սփյուռք-ընդունող պետություն հարաբերությունների ամբողջ բազմաշերտությունը վեր հանելու, այդ եռանկյունու փոխկապակցվածության մեխանիզմներն արժևորելու տեսանկյունից սույն աշխատանքի համար կարևոր նշանակություն է ունեցել հրեա գիտնական Յոսսի Շեյնի «Ազգակցությունը և սփյուռքը

---

[2] **Charrad K.,** Lobbying the European Union, Munster, 2009, p. 2–3.

[3] **Milbrath L.W.,** Lobbying as a Communication Process, Public Opinion Quarterly 24(1), 1960, p. 32–53.

[4] **Charrad K.**, նշվ. աշխ., էջ 2–3:

[5] **Koeppl P.,** ''The acceptance, relevance and dominance of lobbying the EU Commission-A first-time survey of the EU Commission's civil servants''. In: Journal of Public Affairs, vol.1 (N.1), January 2001, p. 69–80.

[6] **Sheffer G.,** Diaspora Politics at Home Abroad, 2006.

[7] **Rogers Brubaker**, The "diaspora" diaspora, Ethnic and Racial Studies, vol. 28 No. 1 January, 2005.

[8] **Safran W.,** Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return, Diaspora, No. 1, Toronto, 1991, 83–99.

[9] **Cohen R.,** Global Diasporas: An Introduction. Second edition, Routledge, 2008.

[10] **Toloyan Kh.,** "Exile Governments in the Armenian polity", Journal of Political Science, V. 18, November 1990, 124-147, **նույնի՝** The Nation-State and its others: In Lieu of a Preface, Diaspora, 1991, 3–7.

[11] **Թորոսյան Տ., Սարադյան Մ.**, Հայկական սփյուռքի հնարավորությունները և ազդեցությունը Հայաստանի Հանրապետության սոցիալ-քաղաքական գործընթացների վրա, Երևան, 2017:

[12] **Նահապետյան Հ.,** Հայ համայնքն ԱՄՆ-ում, Երևան, 2010:

[13] **Հակոբյան Հ.,** Հայկական սփիւռքը յարափոփոխ աշխարհի մէջ, Երեւան, 2018:

միջազգային հարցերում»[14] աշխատանքը, որտեղ Շեյնն առանձնացնում է միջազգային հարաբերություններում սփյուռքի ակտիվության երեք տիպ: Առաջին տիպը «պասիվ դերակատար» սփյուռքն է, որ միջազգային հարաբերություններում ներգրավվում է իր կամքից անկախ և ոչ որպես իր գործունեության հետևանք: Երկրորդ տիպը սփյուռքի ակտիվ ազդեցությունն է ընդունող պետությունների արտաքին քաղաքականության վրա: Երրորդ տիպը սփյուռքի էական ազդեցությունն է հայրենի պետության արտաքին քաղաքականության վրա՝ իր քաղաքական ու տնտեսական կապիտալով, ազգային ինքնության յուրովի ընկալմամբ[15]:

Ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորել ենք էթնիկ լոբբինգի ինստիտուտի դերակատարությունը՝ որպես սփյուռքի քաղաքական գործունեության հիմնական գործառնող:

Սույն ատենախոսության առջև դրված խնդիրների, մասնավորապես էթնիկ լոբբինգի գլոբալ դերակատարության հիմնավորման, սփյուռքյան էլիտաների երկվության մարտահրավերի գնահատման տեսանկյունից կարևոր նշանակություն են ունեցել Ս. Հանթինգթոնի[16] աշխատանքները: Մասնավորապես, ելակետ ընդունելով Ս. Հանթինգթոնի՝ «…երկքաղաքացիությունը լեգիտիմացնում է երկակի ինքնությունը և երկակի հավատարմությունը»[17] և «…հայրենի կառավարությունների հետ սփյուռքի մոտ հարաբերությունները և համագործակցությունը ժամանակակից միջազգային հարաբերությունների առանցքային երևույթներից են»[18] պնդումները՝ հիմնավորել ենք սփյուռքի արդի քաղաքական դերակատարությունը և վեր հանել սփյուռքյան էլիտաների երկվության մարտահրավերը:

Հետազոտությանն առաջադրված միջգիտակարգային խնդիրների վերհանման և վերլուծման համար, մասնավորապես՝ էթնիկ լոբբինգի և փափուկ ուժի հարաբերակցության, էթնիկ լոբբինգի ինստիտուտի՝ որպես արդիականացման գործընթացի դերակատարի և էթնիկ լոբբինգի ապահովման գործում բազմամշակութայնության դերի գնահատման առումով արժեքավոր են եղել Ջոզեֆ Նայի[19], Կառլ Դոյչի[20] և Ուիլ Կիմլիկայի[21] աշխատանքները: Հայ իրականության մեջ արժեքավոր են Մարիամ Մարգարյանի[22] աշխատությունները:

Հաշվի առնելով հետազոտվող թեմային առնչվող տեղական ու միջազգային գրականության սակավությունը՝ հիմնականում օգտագործվել է բազմոլորտ

---

[14] **Yossi Shain**, "Kinship and Diasporas in International affairs", The University of Michigan, 2007.

[15] Նույն տեղում, էջ 131–133:

[16] **Huntington Samuel P.,** "Who are we", New York, 2005, **նույնի՝** The Third Wave: Democratization in the Late Twentieth Century. Norman 1991, **Хантингтон С.,** Столкновение цивилизаций, пер. с англ. Т. Велимеева, Ю. Новикова, М., 2007.

[17] **Huntington Samuel P.,** "Who are we", New York, էջ 212:

[18] Նույն տեղում, էջ 277:

[19] **Nye J.S. Jr.,** Soft Power /Foreign Policy/, N 80, Washington, Twentieth Anniversary, Autumn, 1990.

[20] **Deutsch K.W.,** Social Mobilization and political development, The American Political Science Review, Vol. 55, No. 3, 1961, 493–514.

[21] **Kymlicka W.,** The rise and fall of multiculturalism? New debates on inclusion and accommodation in diverse societies. International Social Science Journal, November 2010, 97–112, **նույնի՝** Multicultural Citizenship, a liberal theory of minority rights, Clarendon press, Oxford, 1995.

[22] **Մարգարյան Մ.,** Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր, Եր., «Պետական ծառայություն», 2004, **նույնի՝** Քաղաքական արդիականացման արժեքային համակարգի էվոլյուցիան, Քաղաքագիտության հարցեր, Քաղաքագիտական հանրապետական երրորդ գիտաժողովի նյութեր, Եր., 2012, **նույնի՝** Քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափումը՝ որպես ռազմավարական կառավարման ապահովման հիմք, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2017, N 4 (94), **նույնի՝** Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2019:

գրականություն՝ փորձելով միջգիտակարգային ուսումնասիրությունների համակարգված մոտեցմամբ լուծել հետազոտության առջև դրված խնդիրները:

Այսպիսով, խնդրի գիտական մշակվածության աստիճանի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա աշխատանքներում և այլ աղբյուրներում առկա են սույն թեկնածուական ատենախոսության թեմայի տարբեր ասպեկտներին վերաբերող արժեքավոր ուսումնասիրություններ: Այնուամենայնիվ, հայ իրականության մեջ դեռևս չկա համակարգային հետազոտություն, որը կպատասխանի էթնիկ լոբբինգի ինստիտուտի միջգիտակարգային փոխառնչությունների լայն համատեքստին և մասնավորապես կանդրադառնա էթնիկ լոբբինգի դերակատարության հնարավորությանը ՀՀ-ԵՄ հարաբերություններում: Այս համատեքստում չի դիտարկվել էթնիկ լոբբինգի ինստիտուտի անդրազգային բազմաշերտ դերակատարությունը, «փափուկ ուժի» կիրառելիության հնարավորությունները, քաղաքական արդիականացման գործընթացում դերակատարության հնարավորությունը, ինչպես նաև ազդեցությունը ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման գործընթացում:

Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության հարաբերությունների զարգացումն է էթնիկ լոբբինգի ինստիտուտի գործառնման համատեքստում:

Հետազոտության առարկան էթնիկ լոբբինգի ինստիտուտն է և, մասնավորապես, Եվրոպայի հայկական լոբբիի բազմակողմ ազդեցությունը ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման վրա:

Ատենախոսության նպատակը: Ատենախոսության նպատակն է արդի քաղաքական գործընթացներում վեր հանել էթնիկ լոբբինգի ինստիտուտի անդրազգային քաղաքական դերակատարությունը, գնահատել Եվրոպայի հայկական լոբբիի կառուցվածքագործառնական հնարավորությունները, գործունեության առանձնահատկությունները, նույնականացնել լոբբիստական սուբյեկտները և հասկանալ դրանց ազդեցության շրջանակն ու ՀՀ-ԵՄ հարաբերություններում դերակատարության հնարավորությունը:

Հետազոտական խնդիրները: Ատենախոսության առջև դրված նպատակն իրագործելու համար կարևոր են հետազոտական հետևյալ խնդիրների լուծումները.

1. դիտարկել էթնիկ լոբբինգը՝ որպես քաղաքական գործընթացի ինստիտուցիոնալ դրսևորում և անդրազգային քաղաքական դերակատար,
2. գնահատել էթնիկ լոբբինգի ինստիտուտի դերակատարությունը քաղաքական արդիականացման գործընթացում,
3. դիտարկել էթնիկ լոբբինգի ինստիտուտի հնարավորությունները՝ հանդես գալու իբրև «փափուկ ուժի» գործառնող,
4. բացահայտել մուլտիկուլտուրալիզմի արժեհամակարգային պայմաններում էթնիկ լոբբինգի դրսևորման հնարավորությունները,
5. համակարգային վերլուծության ենթարկել հայրենիք-սփյուռք-ընդունող պետություն «եռանկյունու» փոխգործակցության և փոխազդեցության շղթան,
6. նույնականացնել Եվրոպայի հայկական սփյուռքի լոբբիստական կառույցները և նրանց գործունեության հիմնական ուղղություններն ու գործիքակազմերը,

7. բացահայտել Եվրոպայի հայկական լոբբինգի գործունեության հիմնական ուղղության՝ ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ ԵՄ քաղաքական վարքը,

8. հասկանալ էթնիկ լոբբինգի ներեվրոպական ընկալումը, լոբբինգի և դրա տարատեսակ էթնիկ լոբբինգի ինստիտուցիոնալ և օրենսդրահրավական հնարավորությունները ԵՄ-ում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության նպատակին ու առաջադրված խնդիրների լուծմանը հասնելու համար ուսումնասիրություններ են իրականացվել «Քաղաքական գործընթացներ և ինստիտուտներ», «Քաղաքական մարդաբանություն», «Քաղաքական սոցիոլոգիա», «Քաղաքական հոգեբանություն» առարկաների շրջանակներում: Այս բազմամակարդակ մոտեցումը հնարավորություն է տվել թեման գիտականորեն վերլուծելիս զուգամիտել համակարգային, պատմահամեմատական, կառուցվածքագործառնական, վարքաբանական և սիներգետիկական մեթոդները: Համակարգային մեթոդի օգնությամբ վերլուծել ենք և փորձել կանխատեսել էթնիկ լոբբինգի գործառնման բազմաչափությունը ինչպես եվրոպական քաղաքական մշակույթում, այնպես էլ ՀՀ-ԵՄ հարաբերություններում: Պատմահամեմատական մոտեցմամբ անդրադարձ է կատարվել հայկական սփյուռքի ձևավորմանն ու էվոլյուցիային: Կառուցվածքագործառնական մեթոդի կիրառմամբ քննության առարկա է դարձել էթնիկ լոբբինգի ինստիտուտը, դրա բազմաճյուղ ազդեցությունն ու դերակատարությունը արդի քաղաքական գործընթացներում: Միևնույն ժամանակ քննարկվել է էթնիկ լոբբինգի ինստիտուտի հարաբերակցությունը քաղաքական գիտության այլ ֆենոմենների հետ՝ «փափուկ ուժի» տեսություն, քաղաքական արդիականացման գործընթաց և մուլտիկուլտուրալիզմ: Վարքաբանական մեթոդի կիրառմամբ ուսումնասիրվել են սփյուռքյան էլիտաների ինքնության մարտահրավերն ու էթնիկ լոբբինգի ծագումը պայմանավորող սոցիալ-հոգեբանական և քաղաքատնտեսական գործոնները: Սիներգետիկական մեթոդի օգնությամբ բացահայտվել է էթնիկ խմբերի ինքնակառավարման և ինքնիրացման հնարավորությունները գլոբալ, գլոկալ և լոկալ հարթություններում:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունում ուսումնասիրված է Եվրոպայի հայկական լոբբին՝ որպես ՀՀ-ԵՄ փոխհարաբերությունների զարգացման դերակատար: Այդ համատեքստում համակարգված վերլուծվել է էթնիկ լոբբինգի գործառնման արժեքային բազմաչափությունը:

Քաղաքական գործընթացում էթնիկ լոբբինգի ինստիտուցիոնալ դրսևորումների միջգիտակարգային վերլուծությունների և գործունեության բազմաչափության վերհանման արդյունքում գիտական ուսումնասիրության տեսադաշտ է բերվել արդի քաղաքական գործընթացներում էթնիկ լոբբինգի ինստիտուտի անդրազգային բազմաշերտ դերակատարությունը:

Հետազոտության ընթացքում նախապես առաջադրված խնդիրների համակարգային ուսումնասիրումը թույլ է տվել հիմնավորել տեսական ու գործնական նշանակության գաղափարներ ու դրույթներ, որոնցից գիտական իմաստով առավել արժեքավոր են ներքոնշյալները.

- Էթնիկ լոբբինգի ինստիտուտը դիտարկվել է որպես անդրազգային քաղաքական դերակատար և սփյուռքի քաղաքական գործունեության հիմնական գործառնող: Առկա

ակադեմիական ուսումնասիրություններում սփյուռքն առավելապես դիտարկվել է էթնոմշակութային և սոցիալ-մշակութային ասպեկտներով: Էթնիկ լոբբինգի՝ իբրև քաղաքական գիտության ֆենոմենի համակարգային ուսումնասիրությունը որոշակիորեն անտեսվել է, և հայկական իրականությունում նման հետազոտությունների ակադեմիական անհրաժեշտություն է առաջացել: Ավելին, էթնիկ լոբբինգի ինստիտուտը նոր բովանդակություն է ստացել և սկսել է ճկուն դրսևորվել «փափուկ ուժի» և «խելացի ուժի» բազմաչափ կիրառելիության պայմաններում:

▪ Լոբբինգի վերաբերյալ առավել ներառական սահմանումների հստակեցման գործընթացում անհրաժեշտ է այն դիտարկել իբրև միջգիտակարգային երևույթ: Դրանով մենք հնարավորություն ենք ստանում բացահայտելու նրա բազմաչափությունը և գլոբալ կառավարման ցանցային դրսևորման կառուցվածքում գործառնման խաղային բնույթը: Այդ առումով, գիտության մեջ առկա սահմանումներն անհրաժեշտ է դասակարգել՝ հաշվի առնելով դրանց առաջացման մեթոդաբանական հիմքը, մասնավորապես՝ համակարգային կամ վարքաբանական բնույթը: Կարևոր է ուշադրություն դարձնել, որ լոբբինգի վերաբերյալ առկա սահմանումները նաև վերաբերում են դրա գործունեության անհատական, համայնքային, միջպետական և անդրազգային ոլորտներին: Ելակետ ընդունելով այս մոտեցումը՝ մեր ատենախոսության տեսական մեկնաբանության հիմքում դնում ենք լոբբինգը որպես քաղաքական զարգացման գործընթացի ինստիտուտ դիտարկելու և այդ ինստիտուտի իրավաքաղաքական գործունեությունը լեգիտիմ և լեգալ կազմակերպելու մարտահրավերը:

▪ Էթնիկ լոբբինգը արդի քաղաքական զարգացումներում ունի գլոբալ դրսևորում: Սակայն, իբրև սփյուռքյան ֆենոմեն, այն նաև գլոկալ և լոկալ դրսևորումներ ունի: Այս պարագայում էթնիկ լոբբինգի ինստիտուտը մեծ մասամբ կատարում է ներսփյուռքյան գործունեություն՝ ներգրավված լինելով համայնքային կյանքում և գործունեություն ծավալելով ընդունող երկիր-սփյուռք հարաբերություններում, որոնք ազդեցություն չեն ենթադրում ընդունող պետության արտաքին քաղաքականության վրա: Դրա վրա ազդեցությամբ և միջազգային հարաբերություններում ներգրավվելով՝ էթնիկ լոբբիստական կառույցները վերածվում են գլոբալ դրսևորում ունեցող անդրազգային դերակատարների:

▪ Կարևորելով արդի քաղաքական զարգացումների տրամաբանության և դինամիկայի ընկալման պատմական ենթատեքստը՝ հիմնավորվել է պետության՝ որպես քաղաքական համակարգի գերակա ինստիտուտի կողմից էթնիկ լոբբինգի շահերի հաշվետվողական կառավարման և կանխատեսման շահագրգռվածությունը:

▪ Աշխատանքում վեր են հանվում էթնիկ լոբբինգի և «փափուկ ուժի» տեսության ընդհանրությունները, բազմամշակութայնության (մուլտիկուլտուրալիզմ) ընձեռած արժեքաբանական և ապագաբանական հնարավորությունները: Ըստ այդմ եզրահանգվել է, որ բազմամշակութայնության ֆենոմենը, ուղղակիորեն առնչվելով սփյուռքին, վերջինիս հնարավորություն է տալիս մասնակցելու ինստիտուցիոնալացված ինքնության քաղաքականության ապահովման գործընթացներին, որի հիմքի վրա էլ տեղի են ունենում ազգային ինքնության բնականոն արդիականացում և քաղաքակրթական չափման ապահովում:

▪ Տեսամեթոդաբանական ուսումնասիրության հենքի վրա գնահատվել է քաղաքական արդիականացման գործընթացում էթնիկ լոբբինգի՝ որպես ազգայինի ու արդիականի կոնվերգենցիան ապահովող դերակատար հանդես գալու հնարավորությունը:

▪ Աշխատանքում հիմնավորվում և գնահատվում է սփյուռքյան էլիտաների երկվության մարտահրավերը, որի հաղթահարման համար կարևորվում է ազգային և սփյուռքյան ինքնությունների՝ անձի ծագմամբ ու ընդունող պետության քաղաքացիությամբ պայմանավորված ինքնությունների կոնվերգենցիան:

▪ Հաշվի առնելով ՀՀ-ԵՄ առաջանցիկ զարգացող հարաբերությունների ռազմավարական կարևորությունը՝ նախանշվել և գնահատվել է այն ներուժը, որով Եվրոպայի հայկական էթնիկ լոբբին կարող է նպաստել ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացմանը՝ ստանձնելով նաև ՀՀ քաղաքական բնականոն արդիականացման ու անվտանգության բարձրացման դերակատարություն:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտությունը նպատակահարմար է օգտագործել էթնիկ լոբբինգի ինստիտուտի միջգիտակարգային համալիր ուսումնասիրությունների համար՝ նկատի ունենալով Եվրոպայի հայկական լոբբիի գործառնումը իբրև քաղաքական գործընթացների ինստիտուցիոնալ դերակատար:

Միաժամանակ, կիրառելիության տեսանկյունից հետազոտությունը նպատակահարմար է օգտագործել հայրենիք-սփյուռք հարաբերությունների զարգացման, հայկական սփյուռքի էթնիկ լոբբիստական հնարավորությունների արդիականացման, առկա խնդիրների նույնականացման, սփյուռքի՝ ազգային ինքնության պահպանման և այլ ուղղություններով:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության հիմնական արդյունքները փորձարկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնում, դասավանդվել են էթնոքաղաքականության գործնական պարապմունքներում, ինչպես նաև հեղինակի՝ որպես «Հայ դատ» հիմնադրամի ծրագրերի պատասխանատուի աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում:

Ատենախոսության թեմայով հեղինակը հայկական պարբերականներում հրապարակել է 6 գիտական հոդված:

Աշխատանքի կառուցվածքը պայմանավորված է առաջադրված խնդիրների տեսական ուսումնասիրման և իրական հնարավորության գնահատման հրամայականով: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի ընդհանուր ծավալը 182 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտվող թեմայի արդիականությունը, ներկայացվում է թեմայի մշակվածության աստիճանը, սահմանվում են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, շարադրվում են հետազոտության

մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը և տեսական ու գործնական նշանակությունը:

«Էթնիկ լոբբինգը՝ որպես քաղաքական գործընթացի դերակատար» խորագիրը կրող, երեք ենթագլուխներից բաղկացած առաջին գլուխում ատենախոսը տեսամեթոդաբանական ծավալուն անդրադարձ է կատարում լիբբինգի ինստիտուտին, հատկապես էթնիկ լոբբինգին՝ բացահայտելով դրա կառուցվածքագործառնական, արժեքաբանական և վարքաբանական առանձնահատկությունները, վեր հանելով հայրենիք-սփյուռք-ընդունող պետություն եռանկյունու բոլոր կողմերի փոխհարաբերություններն ու փոխազդեցությունները, էթնիկ լոբբինգի արդի անդրազգային քաղաքական դերակատարումը:

Առաջին՝ **«Էթնիկ լոբբինգի ինստիտուտի էությունը»** ենթագլխում ատենախոսը համակարգված ներկայացնում է քաղաքական գիտության մեջ «լոբբինգ» եզրույթի առաջացման շուրջ առկա մոտեցումներն ու սահմանումները, որոնք միմյանցից տարբերվում են երևույթի վերաբերյալ տեսամեթոդաբանական վերլուծություն իրականացնելիս առաջ եկած և՛ իմաստաբանական, և՛ ժամանակագրական արժեքային չափումներով:

Լոբբինգի ինստիտուտը ներկայացվում և հիմնավորվում է որպես քաղաքական գործընթացի դերակատար: Եզրահանգված է, որ չնայած էթնիկ լոբբինգն օգտագործում է և՛ ճնշման խմբերի, և՛ շահային խմբերի գործառույթներ, միևնույն ժամանակ քաղաքական գործընթացում հանդես է գալիս ինքնուրույն արժեքաբանական դրսևորմամբ՝ պայմանավորված շահային և ճնշման խմբերի հետ ունեցած լատենտ փոխհամաձայնությամբ:

Ատենախոսը, իբրև լոբբիստական կազմակերպությունների տեխնոլոգիական գործիքակազմ է ներկայացնում հասարակական կարծիքի համախմբումը, ընտրարշավային աջակցումը, պաշտոնական հնարավորությունների ու կապերի կիրառումը, ոչ պաշտոնական կապերի գործադրումը, պետական իշխանության թևերի և մարմինների վրա հոգեբանական ճնշման գործադրումը: Հատուկ անդրադարձ է կատարված ամերիկյան ծագմամբ, բայց նաև Արևմտյան Եվրոպայում լայնորեն կիրառվող “Lobbing the grassroots” տեխնոլոգիային, ինչը ենթադրում է հասարակական ներուժի հնարավորինս մեծ համախմբում և զանգվածային կերպով թիրախային օգտագործում:

Առաջին գլխի երկրորդ՝ **«Էթնիկ լոբբինգի ինստիտուտը՝ որպես անդրազգային քաղաքական դերակատար. սփյուռքյան էլիտաների երկվության մարտահրավերը»** ենթագլխում, ատենախոսը, հաշվի առնելով արդի տուրբուլենտ քաղաքական գործընթացներում, միգրացիոն անկառավարելի հոսքերի և տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների սրընթաց աճի պայմաններում սփյուռքի, որպես քաղաքական ինստիտուտի, դերակատարման մեծացումը, բացահայտում է սփյուռքի քաղաքական դերակատարության հնարավորությունները: Ենթագլխում էթնիկ լոբբինգը հիմնավորվում է որպես անդրազգային բազմաշերտ քաղաքական դերակատար, որը դրսևորվում է հայրենիք-սփյուռք-ընդունող պետություն հարաբերությունների յուրաքանչյուր օղակում: Հատկանշելով Ս. Հանթինգթոնի այն պնդումը, որ «հայրենի կառավարությունների հետ սփյուռքի մոտ հարաբերությունները և

համագործակցությունը ժամանակակից միջազգային հարաբերությունների առանցքային երևույթներից է» պնդումը՝ հանգամանորեն ուսումնասիրվել են էթնիկ լոբբինգի բնույթը և անդրազգային քաղաքական գործունեության ողջ դաշտի արժեքային բազմաչափությունը:

Առաջին գլխի երրորդ «**Էթնիկ լոբբինգը՝ որպես քաղաքական արդիականացման բաղադրիչ և ՀՀ քաղաքական բնականոն արդիականացման դերակատար**» ենթագլխում ատենախոսը հիմնավորել է Եվրոպայի հայկական էթնիկ լոբբինգի դերակատարության հնարավորությունը ՀՀ քաղաքական բնականոն արդիականացման գործընթացում: Ենթագլխում առաջադրված խնդրի տեսամեթոդաբանական վերլուծության արդյունքում՝ ատենախոսն առաջարկում է Հայաստանի զարգացմանն օժանդակելու՝ եվրոպահայ էթնիկ լոբբինգի քաղաքական առաջնահերթությունը վերածևակերպել որպես օժանդակություն Հայաստանի բնականոն արդիականացմանը: Եզրահանգվել է, որ Եվրոպայի հայկական էթնիկ լոբբին կարող է Հայաստանի բնականոն արդիականացման գործընթացում դերակատարում ստանձնել՝ հայկականության սեփական ռեսուրսի և արտաքին փոխառության զուգամիտման ապահովմամբ:

«Հայկական էթնիկ լոբբինգը Եվրոպական Միության անդամ երկրներում» վերնագիրը կրող և երեք ենթագլուխներից բաղկացած երկրորդ գլխում ատենախոսը քննության է առել Եվրոպայի հայկական սփյուռքի ընդհանուր բնութագիրը, Եվրոպայի հայկական լոբբիի կառուցվածքը, քաղաքական առաջնահերթությունները: Գնահատվել է էթնիկ լոբբինգի կիրառելիությունը «փափուկ ուժի» տեսության շրջանակներում: Հաշվի է առնվել ղարաբաղյան հիմնախնդրի առանցքային բնույթը ՀՀ անվտանգային համակարգում, մանրամասնորեն վերլուծվել է հիմնախնդրի ներեվրոպական ընկալումը:

Ատենախոսության երկրորդ գլխի առաջին՝ **«Եվրոպայի հայկական սփյուռքի ընդհանուր բնութագիրն ու քաղաքական աշխարհագրությունը»** ենթագլխում ատենախոսը, առկա ակադեմիական գրականության մեջ սփյուռքի վերաբերյալ բնորոշումների ու դասակարգումների ուսումնասիրմամբ եզրահանգում է, որ Եվրոպայի հայկական սփյուռքը ենթակա չէ միարժեք բնորոշման, առավել ևս՝ դասակարգման, քանի որ Եվրոպայի հայկական համայնքների միջև առկա են տարբերություններ՝ սկսած կազմավորման գործընթացից մինչև արդի սոցիալական, հասարակական կամ քաղաքական գործունեություն:

Երկրորդ գլխի երկրորդ՝ «**Եվրոպայի հայկական լոբբիի քաղաքական գործունեության առաջնահերթությունները. «փափուկ ուժի» կիրառելիության գնահատում»** ենթագլխում ներկայացվում են սփյուռքի հետ ՀՀ պետական քաղաքականության էվոլյուցիան: Ատենախոսը նույնականացնում է Եվրոպայի հայկական սփյուռքի հիմնական լոբբիստական կառույցները՝ առաջարկելով եվրոպական երկրներում գործող հայկական համայնքային այն կազմակերպությունները, որոնք իրենց գործունեությամբ նպաստում են հայկական շահերի սպասարկմանը, պայմանականորեն դիտել երկու հարթության մեջ՝ լոբբիստական և մերձլոբբիստական: Վերլուծության արդյունքում տրվել են Եվրոպայի հայկական լոբբիի զարգացմանն ու արդիականացմանն ուղղված առաջարկություններ: «Փափուկ ուժի» տեսության տեսամեթոդաբանական քննության և լոբբինգի ինստիտուտի հետ արժեքաբանական և գործառութային

համատեղումների արդյունքում ատենախոսի կողմից հիմնավորվում է էթնիկ լոբբինգի գործընթացում «փափուկ ուժի» կիրառելիության նպատակահարմարությունը:

Երկրորդ գլխի երրորդ՝ **«Ղարաբաղյան հիմնախնդիրը ՀՀ-ԵՄ հարաբերությունների քաղաքական զարգացման գործընթացում»** ենթագլխում ատենախոսը վերլուծել է ԵՄ հիմնական ղեկավար կառույցների քաղաքական վարքի էվոլյուցիան ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ՝ սկսած 1980-ական թթ. վերջից, ինչպես նաև ՀՀ-ԵՄ հարաբերությունների ինստիտուցիոնալ հարթակների զարգացումը: Եզրահանգվել է, որ ԵՄ-ն հետխորհրդային տարածքում առկա հակամարտություններին, այդ թվում՝ ղարաբաղյան հակամարտությանը վերաբերում է տարբերակված մոտեցմամբ: Եվրոպական խորհրդարանն ըստ էության նաև ընդունել է Ղարաբաղի ինքնորոշման և անկախության հռչակման փաստի ամբողջական համապատասխանությունը ինչպես միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերին, այնպես էլ ԽՍՀՄ ներքին օրենսդրությանը:

Ատենախոսության երրորդ **«Եվրոպայի հայկական լոբբիի գործունեության քաղաքական, ինստիտուցիոնալ և օրենսդրահիրավական հնարավորությունները»** գլուխը նույնպես բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցում ատենախոսը անդրադառնում է էթնիկ լոբբինգի գործունեության երաշխավորման գործում բազմամշակութայնության դերին, ԵՄ-ում լոբբիստական գործունեության իրավաքաղաքական հենքին և գնահատում Եվրոպայի հայկական լոբբիի դերակատարությունը ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման գործում:

Երրորդ գլխի առաջին՝ **«Բազմամշակութայնության դերը էթնիկ լոբբինգի գործունեության երաշխավորման գործում»** ենթագլխում հեղինակը տեսամեթոդաբանական անդրադարձ է կատարում բազմամշակութայնությանը, իբրև հասարակական-քաղաքական փոխակերպումների գործընթացի կառուցվածքային մաս, ինչը ներկայումս կարևորվում է՝ պայմանավորված միգրացիոն դժվարկառավարելի հոսքերով, ԵՄ անդամ պետություններում ծայրահեղ աջ քաղաքական հոսանքների ակտիվացմամբ, ԵՄ ժողովուրդների էթնիկ պահանջմունքների բավարարմամբ և ներմիութենական համերաշխության պահպանման հրամայականով: Ելակետ ընդունելով Ու. Կիմլիկայի կողմից առաջարկված բազմամշակութայնության դրսևորումները, ատենախոսը եզրահանգում է, որ բազմամշակութայնությունը պետության համար ունի կարգավորիչ և ապագան կառավարող գործառույթ: Բազմամշակութայնությունը միաժամանակ նաև գաղափարական կողմնորոշումների ապահովման և քաղաքական գործունեության երաշխավոր է, սփյուռքին հնարավորություն է տալիս մասնակցելու ինստիտուցիոնալացված ինքնության քաղաքականության ապահովման գործընթացներին:

Երրորդ գլխի երկրորդ՝ **«Լոբբինգի ինստիտուտի գործունեության իրավական հիմքերը Եվրոպական Միության երկրներում»** ենթագլխում ատենախոսը, վերլուծելով լոբբինգի վերաբերյալ ԵՄ օրենսդրահիրավական և կառուցակարգային կարգավորումները, բացահայտում է, որ ԵՄ-ում հիմնականում նկատի է առնված ոչ թե էթնիկ լոբբինգը, այլ լոբբինգի տնտեսական և սոցիալական տարատեսակները: Ըստ ատենախոսի՝ եվրոպական քաղաքական մշակույթը սփյուռքյան էթնիկ լոբբինգն առավելապես դիտում է իբրև շահային խումբ:

Լոբբինգի վերաբերյալ ԵՄ օրենսդրահիրավական և կառուցակարգային կարգավորումների համատեքստում վերլուծված է Եվրոպական Խորհրդարանի, Եվրոպական հանձնաժողովի և ԵՄ խորհրդի կողմից միջհաստատութենական պայմանագրով ստեղծված «Թափանցիկության ռեգիստր» հարթակը: Եզրահանգվել է, որ առկա դժվարությունները պայմանավորված են եվրոպական քաղաքական մշակույթի կողմից էթնիկ լոբբինգի՝ իբրև քաղաքական կատեգորիա ընկալմամբ կամ տարընկալմամբ:

Ատենախոսության երրորդ գլխի երրորդ՝ **«Եվրոպայի հայկական լոբբիի դերակատարությունը ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման գործում»** ենթագլխում ատենախոսը ներկայացրել է համաեվրոպական մակարդակում Եվրոպայի հայկական լոբբիի աշխատանքային հիմնական ուղղությունները, վերլուծվել է հայկական հիմնական լոբբիստական կազմակերպության՝ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի գործունեության բնույթն ու ազդեցության շրջանակը: Եզրահանգվել է, որ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի պարագայում, ի տարբերություն, օրինակ, ԱՄՆ-ի և Կանադայի, լոբբիստական կազմակերպություն-համայնք կապն այնքան էլ ուժեղ չէ: Եվրոպայի հայկական լոբբին հաճախ է հենվում եվրոպահայության ներուժի վրա, բայց հիմնականում քարոզչական դաշտում: Եվրոպայի հայկական լոբբին չի կարողանում եվրոպահայության ներուժը վերածել ընտրական հնարավորության և այդպիսով եվրոպական քաղաքական շրջանակներում ձեռք բերել ազդեցության հավելյալ գործիքներ: Հայ դատի Եվրոպայի գրասենյակի հարաբերությունները ԵՄ գործադիր թևի հետ սահմանափակվում են գլխավորապես բաց նամակների հրապարակմամբ և պատգամավորական գրավոր հարցումներով: Եզրահանգվել է, որ Եվրոպայի հայկական լոբբին, ի դեմս Հայ դատի Եվրոպայի գրասենյակի, Եվրոպական միության ղեկավար կառույցներից միայն Եվրոպական խորհրդարանի վրա ազդեցություն ունի, իսկ ԵՄ իշխանության գործադիր մասի նկատմամբ ազդեցություն, որպես այդպիսին, չունի:

Տրված են Եվրոպայի հայկական լոբբիի գործունեության վերարժևորման և բնականոն արդիականացման տեսամեթոդաբանական և գործնական կիրառելիություն ենթադրող առաջարկներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության մեջ քննարկված հիմնախնդիրների վերլուծությունները հնարավորություն տվեցին կատարելու հետևյալ ամփոփիչ եզրահանգումները:

1. Էթնիկ լոբբինգը լոբբինգի ընդհանրական ինստիտուտի կառուցվածքային մաս է: Երևույթի վերաբերյալ քաղաքական գիտության մեջ առկա տասնյակ սահմանումներն ի վերջո հանգում են նրան, որ քաղաքականության մեջ էթնիկ լոբբինգն արտահայտվում է ընդունող պետության պետական ու տարածքային իշխանության թևերի և հասարակության հետ կատարվող նպատակադրված աշխատանքով, ինչը ենթադրում է հայրենի պետության, ժողովրդի կամ համայնքի համար նպաստավոր որոշումների ընդունում:

2. Էթնիկ լոբբինգը, որպես սփյուռքի քաղաքական գործունեության հիմնական գործառնող, շարունակում է լինել հայրենի պետություններին սփյուռքյան

քաղաքատնտեսական օժանդակության գլխավոր գործոն, ինչը միաժամանակ ազդեցության կարևոր գործիք է այլ պետությունների հետ հարաբերություններում:

3. Սփյուռքյան կառույցները կարող են վերաճել էթնիկ լոբբինգ իրականացնող կազմակերպությունների հիմնականում ազատական բնույթ ունեցող ժողովրդավարական երկրներում, որտեղ խրախուսվում է բազմամշակութայնությունը և կարևորվում քաղաքացիության ինստիտուտը՝ անկախ ազգությունից: Վերջապես, էթնիկ լոբբիստական կառույցների տիրապետող սփյուռքն ավելի ընդունակ է խթանելու անդրազգային կապերը, կամուրջ կամ միջնորդ լինելու հայրենի և ընդունող պետությունների միջպետական հարաբերություններում: Իբրև քաղաքական դերակատարներ՝ նրանք ունակ են նույնիսկ փոխկապակցելու հայրենի պետության միջազգային և ներքին քաղաքականության ոլորտները:

4. Ե՛վ ընդունող պետությունները, և՛ հայրենի պետությունները, ըստ էության, փորձում են լոբբիստական խմբերին պահել սեփական քաղաքական արժեշահային տիրույթներում: Հետևապես, դիվերսիֆիկացված և անկախ քաղաքական գործունեության ձգտումը կենսական անհրաժեշտություն է էթնիկ լոբբիստական կազմակերպությունների գործունեության պահպանման և իմաստավորման համար:

5. Էթնիկ լոբբիստական գործունեության հիմնական նախադրյալը հյուրընկալ պետության ժողովրդավարական բնույթն է, իսկ դրդապատճառներ են ազգային ինքնությունը, դրա ընկալումը, մեկնաբանումը և, ըստ այդմ, հայրենիքին օժանդակելու ձգտումը:

6. Հայրենի պետության վրա սփյուռքի քաղաքական ազդեցության գործոններից մեկն էլ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջոցով հայրենի պետության հասարակության վրա ազդեցության փորձերն են՝ վերջինիս շրջանում սփյուռքյան տրամադրություններ և հույզեր գեներացնելու համար: Արդի քաղաքական զարգացումներում, երբ քաղաքացիական հասարակության ինստիտուտները հաճախ մարտահրավեր են նետում պետական կենտրոնաձիգ կառավարմանը, քաղաքացիական հասարակության միջոցով սփյուռքի ազդեցության ընդլայնման գործընթացը զարգացման միտում ունի: Քաղաքացիական հասարակության ինստիտուտները էթնիկ լոբբիստական կազմակերպությունների կողմից կազմակերպահրավական գործունեության հնարավորություններ են և՛ ընդունող երկրում, և՛ հայրենի պետությունում: Դրանով էթնիկ լոբբինգն իրեն լիարժեքորեն դրսևորում է որպես հանրային քաղաքականության անբաժան մաս:

7. Հայրենի պետությունների ազդեցությունը ընդհանրապես սփյուռքի վրա, որպես այդպիսին, ավելի մեծ է, քան սփյուռքի՝ էթնիկ լոբբինգ իրականացնող կազմակերպությունների վրա, քանի որ վերջիններս ունեն իրենց քաղաքական օրակարգն ու ռազմավարական նպատակները, որոնք կարող են տարբերվել հայրենի երկրի կառավարության քաղաքականությունից:

8. **Էթնիկ լոբբինգի ինստիտուտը, լինելով արդի քաղաքական գործընթացներում սփյուռքի քաղաքական գործունեության գործառնող**, հանդես է գալիս իբրև քաղաքական գործընթացի մակրոմակարդակի դերակատար, ինչն ամրապնդվում և զարգանում է անդրազգային քաղաքական կազմավորումների աճող ազդեցության, գլոբալիզացիայի և տեղեկատվահաղորդակցական

հնարավորությունների ընդլայնման պարագայում: Հայրենի պետությունների՝ սփյուռքի համայնքներին քաղաքականապես ապավինելու միտումները շարունակական աճ են գրանցում: Զուգահեռաբար աճում է ընդունող պետությունների հետաքրքրությունը՝ էթնիկ համայնքների միջոցով վերջիններիս հայրենի պետությունների վրա ազդեցություն գործելու հանդեպ: Հայրենի պետությունները հաճախ միջամտում են այլ պետությունների ներքին գործերին՝ փորձելով վերջիններիս տարածքում ունենալ կայուն, կազմակերպված և քաղաքական կշիռ ունեցող համայնքներ: Այսպիսով, միջազգային հարաբերությունների սփյուռքյան ոլորտը բավական բազմաշերտ տարածություն է, որտեղ խաչաձևվում են պետությունների ներքին ու արտաքին շահերը:

9. Սփյուռքի էլիտաների ինքնության երկվությունը անխուսափելի մարտահրավեր է, որի հաղթահարումը հնարավոր է երկու ինքնությունների ոչ թե դիխոտոմիայի, այլ կոնվերգենցիայի միջոցով, ինչը հնարավորություն կտա հավասարապես բավարարելու երկու ինքնությունների պահանջմունքները և սպասարկելու դրանք՝ չօտարվելով ո՛չ հայրենի, ո՛չ ընդունող պետություններից:

10. էթնիկ լոբբինգի ինստիտուտը և քաղաքական արդիականացումն ունեն տեսամեթոդաբանական ընդգծված համատեղումներ: Էթնիկ լոբբինգի ինստիտուտը կարող է գործուն դերակատարություն ստանձնել քաղաքական արդիականացմանը բնականոն ձևով և ազգային յուրահատուկ մոտեցմամբ արձագանքելու համար: Մասնավորապես հայկական սփյուռքն ի զորու է՝

- կոնվերգենցիայի ենթարկելու ազգային և ունիվերսալ ազգային համակարգերը,
- բնականոն ճանապարհով արդիականացնելու քաղաքական և քաղաքակրթական ինքնությունները,
- տնտեսական կապիտալն օրինականացնելու և ժողովրդականացնելու նպատակով այն դուրս բերելու քաղաքական վերահսկողությունից, ինչը համագործակցության մշակույթի զարգացման շնորհիվ կնպաստի տնտեսության ազատ մրցակցային դաշտի արդյունավետ գործառմանը,
- ստեղծելու անցումային հասարակություններին բնորոշ քաղաքականության և ժողովրդավարական համախմբումը խթանող զարգացման մոդելներ,
- նպաստելու ազգ-պետություն ցանցային գործունեության կազմակերպական ձևի գործարկմանը,
- խթանելու զանգվածային շարժունակությունն ու ազգային մասնակցայնությունը,
- մարդկանց ինքնահաստատման, ինքնադրսևորման ճանապարհով ձևավորելու բաց սոցիալական կառուցվածք,
- նպաստելու քաղաքական և քաղաքացիական հաստատությունների միջև բաց քաղաքական մրցակցություն ապահովող երկխոսության ծավալմանը,
- նպաստելու տեղական ինքնակառավարման արդյունավետ համակարգի ներդրմանը:

11. «Փափուկ ուժի» տեխնոլոգիան և լոբբինգի ինստիտուտն ունեն գործառութային նմանություններ: Երբ որևէ խումբ կամ ազգային փոքրամասնություն, չտիրապետելով ավանդական ուժի որևէ ինստիտուտի, կարողանում է ազդել ընդունող երկրի քաղաքական ղեկավարության և հասարակական կարծիքի վրա, դա ևս «փափուկ ուժի» կիրառման տեխնոլոգիա է, այն տարբերությամբ, որ «փափուկ ուժի»

քաղաքականությունն այս դեպքում չի թելադրվում գերիշխող սուբյեկտի կողմից: Երկու դեպքում էլ գործ ունենք քաղաքական գործընթացի ուրույն և կայացած ինստիտուտների հետ, որոնք քաղաքական ուժ ու գործոն են և բացառում են ուժի ավանդական ընկալման՝ ռազմականության, ֆինանսական գործարքների, հարկադրանքի ու պարտադրման կիրառումը՝ բացառությամբ լոբբինգի կոռուպցիոն դրսևորումների, որոնք, սակայն, տարերային բնույթ չեն կրում:

12. Եվրոպայում հայկական սփյուռքի համայնքները ենթակա չեն միարժեք բնորոշման, առավել ևս՝ դասակարգման: Այդ համայնքների միջև տարբերություններ կան՝ սկսած կազմավորման գործընթացից մինչև արդի սոցիալական, հասարակական կամ քաղաքական ակտիվություն: Տարբեր երկրների ներքին օրենսդրահիրավական կարգավորումները և քաղաքական մշակույթը յուրահատուկ պայմաններ են ստեղծում լոբբիստական խմբերի գործունեության համար: Ընդհանուր առմամբ, Եվրոպայում հայկական լոբբիստական կազմակերպությունների քանակը շատ փոքր է: Խոսքն այն կազմակերպությունների մասին է, որոնց նպատակը հայկական շրջանակների և Հայաստանի Հանրապետության շահի պաշտպանությունն է՝ էթնիկ լոբբինգի ինստիտուտին վերաբերող կոնկրետ գործիքակազմ օգտագործելով: Պետք է փաստել, որ այդպիսի աշխատանք իրականացնող կազմակերպությունները հիմնականում Հայ դատի հանձնախմբերն ու գրասենյակներն են:

13. Եվրոպայում հայկական լոբբիստական գործունեությունն ընդգրկում է երեք հիմնական մակարդակ՝ համաեվրոպական (միջազգային և ինտեգրացիոն տարբեր կազմակերպությունների կենտրոնական գրասենյակների հետ աշխատանք), առանձին պետությունների (պետական իշխանությունների հետ հարաբերություններ) և համայնքային (ներհամայնքային կարիքների բավարարման, կազմակերպվածության բարձրացման մակարդակ): Եվրոպայում հայկական լոբբիստական գործունեության արդյունավետությունը բարելավելու գործին խոչընդոտում են մի քանի գործոններ՝ ուղղակի լոբբիստական կառույցների սակավությունը, համայնքների քաղաքական կազմակերպվածության անբավարար մակարդակը, համապատասխան ներուժի բացակայությունը, «հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր» եռանկյունու գագաթների դերաբաշխվածության անհստակությունը և այլն:

14. Լոբբինգի տեխնոլոգիաների իրականացման առումով կարևոր նշանակություն ունեն հիմնախնդրի ձևակերպումը, տեղեկատվության ապահովումը, քաղաքական մշտադիտարկումը, հասարակական կարծիքի համախմբումը, քաղաքական մշտադիտարկումը, ընտրարշավային օժանդակությունը, պաշտոնական հնարավորությունների և կապերի կիրառումը, ոչ պաշտոնական կապերի գործադրումը, իշխանության վրա ճնշումը և իրազեկումը:

15. Լոբբինգի տեխնոլոգիայի և գործիքակազմի կիրառելիության տեսանկյունից Հայ դատի Եվրոպայի հանձնախմբի կարևոր բացթողումն աշխատանքներում համայնքների ներգրավվածության ցածր մակարդակն է: Դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ համաեվրոպական քաղաքական նախաձեռնությունների մակարդակում համայնքային ներգրավում ապահովելն ավելի դժվար է, քան ԵՄ անդամ պետություններում, հատկապես այն դեպքում, երբ Բելգիայի հայ համայնքը Եվրոպայում ամենակազմակերպվածներից և քաղաքականապես ակտիվներից չէ:

16. Ղարաբաղյան հիմնախնդիրը դիտարկելով ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման համատեքստում՝ պարզ է դառնում, որ դեռևս նախորդ դարի 80-ական թվականներից Եվրոպական խորհրդարանը մշտապես ուշադրության կենտրոնում է պահել իրավիճակը և հանդես է եկել օբյեկտիվ ու փաստարկված դիրքորոշումներով: Այդ դիրքորոշումները հստակորեն վերաբերել են Ադրբեջանի կողմից Ղարաբաղի բնակչության նկատմամբ ագրեսիայի կիրառմանը, խաղաղ քաղաքացիական բնակչության նկատմամբ վայրագություններին, բռնի տեղահանություններին, հումանիտար ճգնաժամերին և ահաբեկչական այլ գործողությունների: Եվրոպական խորհրդարանը քանիցս քաղաքակրթական հակասության մեջ է դիտարկել մի կողմից Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում, մյուս կողմից՝ Ադրբեջանում տեղ գտած հետանկախական քաղաքական զարգացումները, իշխանությունների ձևավորումը, ժողովրդավարական կարգերի ամրապնդման հանձնառությունը և այլն: Ըստ էության՝ Եվրոպական խորհրդարանն ընդունել է Ղարաբաղի ինքնորոշման և անկախության հռչակման փաստի ամբողջական համապատասխանությունը ինչպես միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերին, այնպես էլ ԽՍՀՄ ներքին օրենսդրությանը:

17. Եվրոպական բազմամշակութայնությունը պետության համար ունի կարգավորիչ և ապագան ռացիոնալացնող գործառույթ: Դա թույլ է տալիս պահպանել պետության տարածքային ամբողջականությունը և ներպետական համագործակցության մշակույթը, ինչպես նաև բանակցային գործընթացներով կարգավորել տարաբնույթ խմբերի ու սուբյեկտների ինքնորոշման կամ անջատման փորձերը: Սակայն քաղաքական առավել համեստ նկրտումներ ունեցող խմբերի համար, որպիսիք ներգաղթյալներն են և սփյուռքյան համայնքները, բազմամշակութայնությունը որոշակիորեն քաղաքական գործունեության և՛ գաղափարաքաղաքական և արժեքաբանական երաշխավոր է: Որպես այդպիսին՝ ընդունող երկրում ազգային-համայնքային կյանք զարգացնելը, ազգային կրթադաստիարակչական և մշակութային գործունեությունը, հայրենիքի շահերի պաշտպանությունը, էթնիկ լոբբինգը դառնում են համապատասխան շահային խմբերի գործունեության առանցք:

18. Բազմամշակութայնության ֆենոմենը, դառնալով սփյուռքի կայացվածության երաշխավոր, վերջինիս հնարավորություն է տալիս մասնակցելու ինստիտուցիոնալացված ինքնության քաղաքականության ապահովման գործընթացներին, որի հիմքի վրա էլ տեղի է ունենում սեփական ինքնության բնականոն արդիականացում և քաղաքակրթական չափման ապահովում:

19. ԵՄ-ն, լինելով բազմամշակութայնության, ներմիութենական համերաշխության ապահովման և զանազան էթնիկ խմբերի պահանջմունքների բավարարման ջատագով, այնուամենայնիվ, էթնիկ լոբբինգի կառուցվածքագործառնական և նեովարքաբանական շրջանակներում կառավարման համապատասխան մեխանիզմներ չի երաշխավորում: Սակայն, նկատի առնելով նոր աշխարհակարգի անորոշություններն ու քաղաքական տուրբուլենտության օջախների անկանխատեսելիությունը, կարծում ենք, չպետք է անտեսել էթնիկ համայնքների պահանջմունքների բավարարման գործում բազմամշակութայնության ընձեռած հնարավորությունները, որոնք անուղղակիորեն կարող են նպաստել էթնիկ լոբբիստական գործունեության զարգացմանը և ներգաղթյալների բնականոն ինտեգրմանը:

20. Լոբբինգի վերաբերյալ Եվրոպական միության օրենսդրահիրավական և կառուցակարգային կարգավորումների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ ԵՄ-ում հիմնականում կարևորված է ոչ թե էթնիկ լոբբինգը, այլ լոբբինգի այլ տարատեսակներ, ինչպիսիք են տնտեսական և սոցիալական լոբբինգը: Սա նշանակում է, որ եվրոպական քաղաքական մշակույթը սփյուռքի էթնիկ լոբբինգի ինստիտուտն առավելապես դիտում է շահերի խմբերի, ոչ թե լոբբինգի ինստիտուտի համատեքստում: Ավելին, լոբբինգն էլ Եվրոպական միությունն ընկալում և բանաձևում է որպես հատուկ շահերի (special interests) ներկայացման գործընթաց՝ ակնհայտորեն խուսափելով «լոբբինգ» եզրույթի հաճախակի կիրառումից:

21. Եվրոպական միությունում լոբբինգ իրականացնող կազմակերպություններն ունեն ազգային, եվրոպական և միջազգային բնույթ: Այդ կազմակերպությունների գործունեությունը եվրոպական հասարակական-քաղաքական, ինչպես նաև փորձագիտական ընկալման մեջ նախևառաջ ասոցացվում է տնտեսական ու հասարակական գործունեության, մասնավոր ձեռնարկատիրության, իրավաբանական կազմակերպությունների, հանրային խնդիրների խթանման հետ:

22. Էթնիկ լոբբիստական խմբերի համար Եվրոպական միության՝ լոբբինգի վերաբերյալ կարգավորումները օրենսդրահիրավական և ինստիտուցիոնալ խոչընդոտներ չեն ստեղծում: Առկա դժվարությունները պայմանավորված են բացառապես եվրոպական քաղաքական մշակույթի կողմից էթնիկ լոբբինգի՝ իբրև քաղաքական ինստիտուտի ընկալմամբ կամ տարընկալմամբ: Այդուհանդերձ, հասարակական կազմակերպություններին տրվող արտոնությունները հնարավորություն են տալիս իրականացնել համայնքային բնույթի էթնիկ լոբբիստական գործունեություն՝ վերլուծելով ու օգտագործելով լոբբինգի վերաբերյալ ԵՄ-ում առկա հնարավորությունները:

23. Համաեվրոպական մակարդակում գործող հայկական լոբբին, ինչի հիմնական դերակատարը ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակն է (European Armenian Federation for Justice and Democracy), ԵՄ ղեկավար կառույցներից հիմնականում աշխատում է Եվրոպական խորհրդարանի հետ՝ հաշվի առնելով լոբբիստական խմբերի նկատմամբ այդ կառույցի համեմատաբար բաց լինելը, ինստիտուցիոնալ հնարավորությունները և ներկայացուցչական բնույթը: Խորհրդարանական ընթացակարգերը լավագույն հարթակ են լոբբիստական խմբերի հետաքրքրությունները ներկայացնելու համար: Հայ դատի Եվրոպայի գրասենյակի գործունեության ուղղություններից պարզ է դառնում, որ այս կառույցի աշխատանքները հստակ խորհրդարանական ուղղվածություն ունեն:

24. Հայ դատի Եվրոպայի գրասենյակի հարաբերությունները Եվրոպական միության իշխանության գործադիր թևի՝ Եվրոպական խորհրդի, ԵՄ խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի, ինչպես նաև Արտաքին գործողությունների եվրոպական ծառայության հետ սահմանափակվում են գլխավորապես բաց նամակների հրապարակմամբ և պատգամավորական գրավոր հարցումներով:

25. Եվրոպայի հայկական լոբբին, ի դեմս Հայ դատի Եվրոպայի գրասենյակի, Եվրոպական միության ղեկավար կառույցներից ազդեցություն ունի միայն Եվրոպական խորհրդարանի վրա, իսկ ԵՄ իշխանության գործադիր մասի նկատմամբ որևէ ազդեցություն չունի: Եվրոպական խորհրդարանի վրա հայկական լոբբիի ազդեցությունը պայմանավորված է ինչպես հայ գործիչների ամենօրյա աշխատանքով, այնպես էլ

Խորհրդարանում Ադրբեջանի և Թուրքիայի նկատմամբ ձևավորված օբյեկտիվ դիրքորոշումներով:

Հենվելով հետազոտության հիմնական արդյունքների վրա՝ նպատակահարմար ենք համարում ներկայացնել հետևյալ տեսական և կիրառական առաջարկությունները.

• Հայրենի պետության վրա սփյուռքի տնտեսական ազդեցությունը պետք է տարանջատել էթնիկ լոբբինգի ֆինանսական ազդեցությունից կամ վերջինս դիտել որպես առաջինի ենթատեսակ: Ըստ այդմ՝ առաջարկում ենք առանձնացնել էթնիկ լոբբինգի դերակատարության երկու մակարդակ՝ 1) այլ պետությունների և հայրենի երկրների հետ ֆինանսական կապերի ուժեղացում, օժանդակությունների, հատկացումների, գործարար շրջանակների ներգրավում, 2) սփյուռքի համայնքներում էթնիկ լոբբինգ իրականացնող խմբերի ազդեցությունների օգտագործում ուղղակի սփյուռքյան ներգրավումների համար, որոնք հիմնականում ունեն եռաստիճան կառուցվածք՝ սփյուռքյան ներդրողներ, սփյուռքյան կազմակերպությունների ներդրումներ, սփյուռքյան արտաքին ուղղակի ներդրումներ:

• Եվրոպական երկրներում գործող հայկական համայնքային այն կազմակերպությունները, որոնք իրենց գործունեությամբ այս կամ այն կերպ նպաստում են հայկական պետությունների շահի սպասարկմանը, նպատակահարմար է դիտարկել երկու հարթության մեջ՝ լոբբիստական և մերձլոբբիստական: Վերջիններս հիմնականում տեղական-համայնքային և քաղաքական կազմակերպություններն են:

• Հայկական սփյուռքի էթնիկ լոբբինգը պետք է դիտել որպես սփյուռքում հայապահպանության կարևոր ինստիտուտ, որն ունի ազգապահպան ու համախմբող նշանակություն: Հետևաբար Հայաստանի Հանրապետությունը, առանց այլ պետությունների գործերին ուղիղ միջամտելու, պետք է նպաստի էթնիկ լոբբիստական կառույցների զարգացմանը՝ իրավունք չվերապահելով ուղղորդել դրանց գործունեությունը:

• Հայաստանի զարգացմանն օժանդակելու՝ հայկական էթնիկ լոբբինգի քաղաքական առաջնահերթությունը պետք է վերածևակերպել որպես օժանդակություն Հայաստանի բնականոն արդիականացմանը: ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացումը ենթադրում է ոչ միայն արժեքների բնականոն արդիականացում, այլև սոցիալ-մշակութային և էթնոմշակութային արժեքների զուգամիտում: Հետևաբար սփյուռքը Հայաստանի հետ իր հարաբերությունները պետք է կառուցի՝ նկատի ունենալով ՀՀ քաղաքական արդիականացման մարտահրավերները, իսկ Հայաստանն իր հերթին պետք է հաշվի առնի սփյուռքի բազմամշակութային բնույթը, նրա ընձեռած հնարավորություններն ու մարտահրավերները:

• Նպատակահարմար է, որ ՀՀ կառավարությունը քննարկի սփյուռքյան պարտատոմսերի թողարկման գաղափարը՝ սփյուռքի՝ հայրենիք ուղղվող ֆինանսական միջոցների էական աճ ապահովելու համար: Հայաստանի տնտեսության խթանումից զատ, դա հնարավորություն կտա ինստիտուցիոնալացնել ազգային ինքնության զարգացումը և ամրապնդել հայրենի պետության անկախությունն ու ինքնիշխանությունը:

• Անհրաժեշտ է, որ Եվրոպայի հայկական լոբբիստական կազմակերպությունները մեծացնեն եվրոպահայ համայնքի հետ իրենց կապը՝ վերածվելով իրական «grassrots» լոբբինգի դերակատարների: Հաշվի առնելով Ամերիկայում Հայ դատի հանձնախմբի և

Ամերիկայի հայկական համագումարի, ինչպես նաև Հայ դատի Կանադայի հանձնախմբի փորձն այս ոլորտում՝ Եվրոպայի հայկական կազմակերպությունները կարող են տեղայնացնել հյուսիսամերիկյան փորձը՝ չանտեսելով ամերիկյան և եվրոպական քաղաքական մշակույթների տարբերությունը:

• Կարևորելով արդի քաղաքական գործընթացներում ցանցային կառավարման դերն ու ազդեցության անորոշությունները՝ պետք է շարունակ խթանել սփյուռքյան կազմակերպությունների փոխգործակցությունն ու շփումները՝ հասնելով որոշակի ինստիտուցիոնալ հարթակների ձևավորման ու գործարկման:

Եվրոպայի հայկական լոբբին պետք է աշխատակարգային որոշակի վերանայումներ կատարի և, չհրաժարվելով արդեն իսկ գոյություն ունեցող քաղաքական նպատակադրումներից, աշխատանքներ իրականացնի նաև ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման ուղղությամբ, ինչը կարող է ներառել՝

- ՀՀ-ԵՄ քաղաքական երկխոսության խթանումը,
- միջհասարակական շփումների աշխուժացումը,
- հայաստանյան և եվրոպական ոչ կառավարական կազմակերպությունների միջև երկխոսության խթանումը,
- «փափուկ ուժի» հնարավորությունների նպատակային օգտագործումը,
- ՀՀ-ԵՄ կրթական նախաձեռնությունների խթանումը,
- ՀՀ-ԵՄ տնտեսական հարաբերությունների զարգացումը,
- ՀՀ քաղաքական համակարգի բնականոն արդիականացումը,
- արդիական փորձի ու տեխնոլոգիաների տեղայնացումը Հայաստանում,
- ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված համագործակցության համաձայնագրի հնարավորինս արդյունավետ կիրարկումը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում՝

1. Ղուկասյան Գ., Էթնիկ լոբբինգի ինստիտուտի էության շուրջ, Հանրային կառավարում, 2, Երևան, 2019, էջ 184-193:
2. Ղուկասյան Գ., Արևմտյան Եվրոպայի հայկական սփյուռքի լոբբիստական գործունեության շուրջ, Պատմություն և մշակույթ, 2020, 1, էջ 242-251:
3. Ղուկասյան Գ., Ղարաբաղյան հակամարտությունը Հայաստան-ԵՄ հարաբերություններում 1988-2018թթ., Պատմություն և քաղաքականություն, թիվ 1(12), Երևան 2021, էջ 55-90:
4. Ղուկասյան Գ., «Փափուկ ուժի» տեսության և լոբբինգի ինստիտուտի հարաբերությունների շուրջ, ՎԷՄ համահայկական հանդես, 4 (68), Երևան 2019, էջ 245-257:
5. Մարգարյան Մ., Ղուկասյան Գ., Էթնիկ լոբբինգի ինստիտուտը՝ որպես ՀՀ քաղաքական զարգացման և արդիականացման դերակատար, ՎԷՄ համահայկական հանդես, 3 (75), Երևան 2021, էջ 241-262:
6. Ղուկասյան Գ., Էթնիկ լոբբինգը՝ որպես անդրազգային դերակատար. սփյուռքյան էլիտաների երկվության մարտահրավերը, Գիտական Արցախ, 3 (14), 2022, էջ 88-105:

GEVORG MARTIK GHUKASYAN

THE ARMENIAN LOBBY OF EUROPE AS AN ACTOR FOR THE DEVELOPMENT OF RELATIONS BETWEEN THE REPUBLIC OF ARMENIA AND THE EUROPEAN UNION

Dissertation under IG. 00.02 - "Political Institutions and Processes" aspiring to earn PHD in Political Sciences

The defense of the dissertation will take place at 1:00 p.m., June 29th, 2023, at the session of Specialized Council 056 specializing in "Political Science and International Relations" of the Higher Attestation Committee of the Republic of Armenia at Yerevan State University

(Address: Alek Manukyan 1, Yerevan 0025, Republic of Armenia)

Summary

After the independence of Armenia, conditioned by the continuous transformation of homeland-diaspora relations, it has become necessary to reevaluate the axiology of the activities of ethnic lobby in the conditions of present global uncertainties and turbulence (muddle) on the example of a possible role in the development of the relationships between the Republic of Armenia and the European Union. In that context, emphasizing the peculiarities of the modern network management, the rapid growth of uncontrollable migration flows and information-communication technologies, it has become necessary to study the role of the diaspora and especially the Armenian Diaspora. Due to the development of the culture of global, glocal and local (national) cooperation, it is expedient to evaluate the place and role of the diaspora in the global management system as a transnational political actor. In the context of analyzing these issues, the Armenian lobby of Europe is studied in the Dissertation as an actor in the development of RA-EU relations. The value multidimensionality of the work of ethnic lobbying has been analyzed in a structured way.

As a result of interdisciplinary analysis, the role of transnational network of the institute of ethnic lobby was revealed. The following scientific novelties of theoretical and practical significance are substantiated.

- The institute of ethnic lobby has been seen as a transnational political actor and the main operator of the political activity of diaspora. In the existing academic studies, the diaspora has been mostly analyzed in terms of ethno-cultural and socio-cultural aspects. Structured study of ethnic lobby as a phenomenon of political science has been understudied, and an academic need for such research has arisen in the Armenian reality. In the conditions of political turbulence, the institute of ethnic lobby has obtained a new content and begun to flexibly manifest itself in the network applicability of "soft power" and "smart power".
- It is justified that in the process of clarifying the most inclusive definitions of lobbying, it is necessary to consider it as an interdisciplinary phenomenon. This enables us to discover its multidimensionality and the playful nature of its operation in the structure of the network manifestation of global governance. In that sense, it is necessary to classify the existing definitions in the political science, taking into account the methodological basis of their emergence, in particular, their systemic or behavioral nature. It should be noted that the

existing definitions of lobbying also refer to individual, community, interstate and transnational spheres of its activity. Taking this approach as a starting point, the theoretical interpretation of the dissertation is based on the challenge of considering lobbying as an institute of the political development process and organizing the legal and political activities of this institute legitimately and legally.

- Ethnic lobbying has a global manifestation in the modern political developments. However, as a diasporic phenomenon, it also has glocal and local manifestations. The Institute of ethnic lobby implements activities within the diaspora too, being involved in community life and carrying out activities in host country-diaspora relations, which do not imply influence on the foreign policy of the host state. By influencing the foreign policy of the host state and getting engaged in international relations, ethnic lobbying institutions become transnational actors with a global manifestation.
- Emphasizing the historical context of comprehending the logic and dynamics of modern political developments, the interest of the state as the superior institution of the political system in the accountable management and forecasting of ethnic lobbying interests was substantiated. The work highlights the commonalities of ethnic lobbying and "soft power" theory, the value-based and futurological opportunities offered by multiculturalism. Accordingly, it has been concluded that the phenomenon of multiculturalism, being directly related to the diaspora, gives the latter the opportunity to participate in the processes of ensuring the institutionalized policy of identity, on the basis of which the normal modernization of the national identity and civilization dimension takes place.
- On the basis of the theoretical-methodological study, the possibility of ethnic lobbying as an actor ensuring the convergence of the national and the modern was assessed in the process of political modernization.
- The dissertation substantiates and evaluates the challenge of the duality of diaspora elites, to overcome which the convergence of national and diaspora identities, determined by the origin of a person and the citizenship of the host state, is important.
- Taking into account the strategic importance of the progressive development of RA-EU relations, with the potential of which the European Armenian ethnic lobby can contribute to the development of RA-EU relations, undertaking the role of normal political modernization of RA and increasing security, has been outlined and evaluated.

The work consists of an introduction, three chapters, a conclusion, a bibliography and an appendix. Each chapter has three subheadings. The total volume of the work is 182 pages. In a structured way the work analyzes the institute of ethnic lobbying, reveals the essence and nature of the Armenian lobby in Europe, the scope of its political and transnational influence, and its possible role in the development of RA-EU relations. As a result of the scientific research, a number of recommendations have been made to increase the effectiveness and influence of the Armenian lobby in Europe, in particular, the Armenian lobby in Europe should make certain revisions to its work procedures and, without renouncing the already existing political goals, it should also carry out work in the direction of the development of RA-EU relations, which can include the following: the promotion of RA-EU political dialogue, the revitalization of inter-social contacts, the promotion of dialogue between Armenian and European non-governmental

organizations, the purposeful use of "soft power" opportunities, the promotion of RA-EU educational initiatives, the development of RA-EU economic relations, the normal modernization of the RA political system, the localization of modern experience and technologies in Armenia, the most effective implementation of the RA-EU Comprehensive and Enhanced Partnership Agreement.

ГУКАСЯН ГЕВОРК МАРТИКОВИЧ

АРМЯНСКОЕ ЛОББИ ЕВРОПЫ КАК АКТОР РАЗВИТИЯ ОТНОШЕНИЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА

Диссертация на соискание научной степени кандидата политологических наук по специальности ИГ.00.02 "Политические институты и процессы"

Защита диссертации состоится в 13:00 29 июня 2023 г. в Специализированном совете 056 "Политология и международные отношения" ВАК РА, действующем в Ереванском государственном университете (адрес: РА, г. Ереван, 0025, ул. Алека Манукяна, 1)

Резюме

После обретения Арменией независимости возникла необходимость в проведении в условиях глобальной неопределенности и турбулентности переоценки аксиологии деятельности этнического лоббинга на примере его потенциальной роли в развитии отношений Республики Армения и Европейского Союза, что было обусловлено постоянной трансформацией отношений родина-диаспора. Выделение в этом контексте специфики современного сетевого управления, стремительного роста неуправляемых миграционных потоков и информационно-коммуникационных технологий вызвало необходимость изучить политическую роль диаспоры и, в частности, армянской диаспоры.

В связи с развитием культуры глобального, глокального и локального (национального) сотрудничества целесообразно дать оценку месту и роли диаспоры в системе глобального управления как транснационального политического актора. В контексте изучения этих проблем в диссертации исследовано армянское лобби Европы как актор развития взаимоотношений РА-ЕС. Проведен системный анализ ценностной многомерности выполнения функции этнического лоббинга.

В результате проведения междисциплинарного анализа раскрыта транснациональная сетевая роль института этнического лоббинга. Обоснованы следующие научные инновации теоретического и практического значения.

- Институт этнического лоббинга рассмотрен как транснациональный политический актор и основной осуществитель функции политической деятельности диаспоры. В существующих академических исследованиях диаспора рассмотрена главным образом в этнокультурном и социально-культурном аспектах. Системное исследование этнического лоббинга как феномена политической науки в определенной степени выпало из поля зрения, и в армянской действительности возникла академическая необходимость в подобного рода исследованиях. В условиях политической турбулентности институт этнического лоббинга получил новое

содержание и начал проявлять гибкость в условиях сетевого применения “мягкой силы” и “умной силы”.

- Обосновано, что в процессе уточнения максимально инклюзивных определений лоббинга необходимо рассматривать его как междисциплинарное явление. Тем самым мы получаем возможность выявить его многомерность и игровой характер осуществления функции глобального управления в структуре сетевого проявления. В этом плане существующие в политической науке определения необходимо классифицировать с учетом методологической основы их появления, в частности системного или поведенческого характера. Важно обратить внимание на то, что существующие определения лоббинга касаются также индивидуальной, общинной, межгосударственной и транснациональной сфер данной деятельности. Поскольку за отправную точку взят такой подход, то в основу теоретического толкования диссертации положен вызов рассматривать лоббинг как институт политического развития, а также как легитимную и легальную организацию политико-правовой деятельности этого института.
- В современных политических процессах этнический лоббинг имеет глобальное проявление. Однако как диаспоральный феномен он имеет также глокальные и локальные проявления. Институт этнического лоббинга осуществляет также внутридиаспоральную деятельность, будучи вовлеченным в общинную жизнь и развертывая деятельность в отношениях принимающая страна-диаспора, которые не предполагают воздействие на внешнюю политику принимающего государства. Посредством воздействия на внешнюю политику принимающего государства и вовлеченности в международные отношения этнические лоббистские структуры трансформируются в имеющих глобальное проявление транснациональных акторов.
- С учетом важности логики современных политических процессов и исторического подтекста восприятия динамики обоснована заинтересованность государства как превалирующего института политической системы в отчетном управлении интересами этнического лоббинга и их прогнозировании.
- В работе выявлены общности этнического лоббинга и теории “мягкой силы”, предоставленные мультикультурализмом аксиологические и футурологические возможности. Исходя из этого сделан вывод о том, что феномен мультикультурализма, имея непосредственное отношение к диаспоре, предоставляет ей возможность участвовать в процессе обеспечения политики институционализированной идентичности, на основе которой и происходит естественная модернизация национальной идентичности и цивилизационного измерения.
- На основе теоретико-методологического исследования была дана оценка этническому лоббингу как возможности выступить в процессе политической модернизации актором, обеспечивающим конвергенцию национального и современного.
- В работе дается обоснование и оценка вызова двойственности диаспоральных элит, для преодоления которой важное значение имеет конвергенция идентичностей, обусловленных происхождением личности и гражданством принимающего государства.
- Учитывая стратегическую важность прогрессивно развивающихся отношений РА-ЕС, обозначен и оценен потенциал, позволяющий армянскому этническому лобби Европы

способствовать развитию отношений РА-ЕС, осуществляя также естественную политическую модернизацию и повышая безопасность РА.

Работа состоит из введения, трех глав, заключения, списка литературы и приложения. Каждая глава имеет три подзаголовка. Общий объем работы – 182 страницы. В работе проведен системный анализ института этнического лоббинга, выявлены суть и характер армянского лоббинга Европы, рамки его политического и транснационального влияния, потенциальная роль в процессе развития отношений РА-ЕС. В результате научного исследования представлены предложения по повышению эффективности и усилению влияния армянского лобби Европы. В частности, армянское лобби Европы должно осуществить определенный текущий пересмотр и, не отказываясь от уже существующих политических целей, провести работу также в направлении развития отношений РА-ЕС, что может включать стимулирование политического диалога РА-ЕС, активизацию межобщественных контактов, стимулирование диалога между армянскими и европейскими неправительственными организациями, целевое использование возможностей "мягкой силы", стимулирование образовательных инициатив РА-ЕС, развитие экономических отношений РА-ЕС, естественную модернизацию политической системы РА, локализацию в Армении современного опыта и технологий, максимально эффективное выполнение Соглашения о всеобъемлющем и расширенном партнерстве РА-ЕС.